



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Բ.- Ի ՍՈՒԾԲ ԾՆՍԴԻՆԴՆ ՓԲԿՉԻՆ

Զի անէծքն լուծաւ, արտասուսն փարատեցաւ, տըրտութիւնն սփոփեցաւ, վիշտն հայթայթեցաւ, սուզն մխիթարեցաւ, փարմեռութիւնն արմատախիլ եղեւ, արտաքսեալն դարձեալ, դրախտն բացաւ, դժոխքն աւերեցաւ, և երկիր խաղաղութեամբ լցաւ:

Փառք ի բարձունս, զի բարձրեալն անտի խոնարհեցաւ, յերկիր խաղաղութիւն, զի խոնարհութեամբն անճառելի՝ ըզիսովութիւն երկրի և զպատերագունս անմարմնոցն՝ մարմնաւորութեամբն իւրով հանդարտեցոյց, քանզի հշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից ծաղեցաւ, Տէր որ ետ դքաջցրութիւն, և աշխարհ մեր տացէ զպտուզ իւր, արդարութիւն առաջի նորս գնասցէ:

Զի ուստի լցաւ անիծիւք, այսօր անտի լցաւ օրհնութեամբ, խայթոցք օձին բթեցաւ, որ ի թունից նորա գլորեցան, խանձմարրօք մանկանս այս տպրեցան, թոյնիք նորա եղծան, և [յանապատահոս և ի կարծրարուղին յաղերէ յալամանէ ի բաց լուացաւ, թշնամին պատրեալ կործանեցաւ, և խաւարեալքն լուսաւորեցան]:

Ցիրաւի բարբառեցաւ ձայն երկնայնոցն, ասել՝ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճեցաւ վասն մարդկան ուրացողաց և ամպարչաց արարօնն մարդոյն՝ այսօր մարդ լինել, և ի փառս իւր զմարդկայինն վերացուցանէ. ասպա պարտ է՝ ուրախանալ երկրաւորացս ընդ երկնաւորսն, յաղազս երկնաւորին, և երկնաւորքն՝ ուրախանալ ընդ երկրաւորքս, յաղազս երկրաւորին: Երկրաւորքս պարտիմ՝ զի զոր ոչն կարէաք տեսանել յերկինս տեսաք յերկիր, և երկնաւորքն ուրախանան, զի զոր ոչն կարէին նրկատել երկնաւորաւն՝ տեսին երկրաւս:

Քանզի բնութիւն աստուածութեանն և մարդկութեանն միացան այսօր առ մանուկս ար, որ ծնաւ փրկիչ մեղ, առ մի երես, տո մի որդին միածին, որ էր անտեսանելի աստուածային՝ բնութեան որդի, այսօր եղեւ տեսանելի մարդկայինն բնութեամբն՝ հրեշտակաց և մարդկան. զԱստուած՝ մարդիկ մարդ տեսին, և զմարդն հրեշտակք՝ Աստուած փառաւորեցին: Ասպա պարտ է զմարժինն հոււասար բանին Աստուած խոստովանիլ, զի ի ձեռն մարմնոյ երկեցաւ անտեսանելին երկնաւորաց և երկրաւորաց: Եւ այսօր երկնաւորքս տօնակից լինին երկնաւորացն, և ասել՝ փառք ի բարձունս Աստուածոյ, որ ի բարձրութենէ երկնից խոնարհեցաւ, և յերկիր խաղաղութիւն, զի իշանելովն իւրով, զերկիր ի խոռովութենէ հանդարտեցոյց, ի մարդիկ հաճութիւն, զի արարողն երկնից և երկրի մարդ լինի:

Այս առաւել սրանցելեացն և հրաշագործութեան հրաշագործողին, որ էր և միշտ է, և ի վեր քան զբան և զմիսս, որ ի հողոյ մարդ արարեալ՝ մարդ լինի, որ ի կաւէ բանաւոր անօթ ստեղծեալ, անօթ ստեղծանի, որ ի նա-

խասուեղծն փշեաց Հոգի կենդանի, այսօր ի ստեղծուածէ առեալ միտք, Հոգի, որ է անմահ աստուածային բնութեամբն, այսօր առեալ զմահկանացու բնութիւնն մեր, և արարեալ անմահ աստուածային բնութեամբն: Այսօր առեալ ըպմահկանացու բնութիւնն մեր և արարեալ անմահ, և մեռանի Աստուած մարմնով, զի կենդանասցի մարդն աստուածութեամբն: Ճոխն աղքատանայ, զի աղքատն՝ նորա աղքատութեամբն մեծացի:

Ո՞վ իրացդ սքանչելի, ճոխն աղքատանայ և ի մարմնոյ իւրոյ կերակրէ զամենայն տիեզերս, ճոխն աղքատանայ և զիսոնարհն՝ բարձրացուցանէ, ճոխն աղքատանայ և զհզօրն քակէ յամոռոյն, ճոխն աղքատանայ և զքաղցեալոն լընու բարութեամբ, ճոխն աղքատանայ, և զմեծասունն արձակէ ունայն:

Ո՞վ աղքատութեանս այս, օտարութեանս, որ զերկինս ձգեալ և արարեալ զերկիր, և զբնակեալ ի բարձրութեան երկնից, այսօր յանապատն յայրին, աղքատարար ծնանի: Որ ի փայլատակմանէ տառուածութեան նորա բոցեղէն թեատրողեալքն ծածկէին զերեսս իւրեանց, այսօր աղքատարար ի խանձարուր պատի: Որ բիւրս բիւրուց հրեշտակք պաշտեն զնս, և Ռք Ռաց հրեշտակապետացն սպասաւորեն նմա(ն), այսօր ի հովուաց բարերանի: Որ ի վերայ հրանիթ աթոռոց քառակերպից նստի, այսօր իրբն աղքատ ի մոռւր անրանից բադմի:

Ո՞վ աղքատութեանս այս հիանալի, յայրին աղքատարար տղայ լինի, և յերկինս աստուածարար յերկնաւորաց բարերանի: Յայրին ի խանձարուր պատի, և յերկինս ի հրանիթիցն փառարանի: Յայրին ի մսուր բազմի և յերկինս ի ծոցոյ Հօր ոչ պակասի: Յայրին ի հովուաց փառաւորի, և յերկինս ի դասապետաց փառարանի:

Զայնպիսի ճոխն՝ այսպիսի աղքատ տեսանեմ. զոր ի կրկին՝ ի վեր և ի վայր տարութերեալ ի մէջ ածի: Այլ տեսցուք եթէ յաղակս աղքատիս այս զի՞նչ պատմէ մեզ աստուածային աւետարանիչն Մատթէոս: Ի ծնանելին Յիսուսի, ասէ, ի Յեթղահէմ Հրէատանի, յաւուրս Հերովդի արքայի, ահա մողք յարեւից և կին յերուսաղէմ, և ասեն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն հրէից, զի տեսաք զատողն նորա յարեւելս, և եկաք երկիր պատանել նմա: Խոկ եթէ այդ այդպէս է յաղակս աղքատի այսօր, ասկա աղքատութիւնս այս կարի մեծապէս վերապոյն է. զի թագաւորք յարեւելից զան նմա յերկրպագութիւն յերուսաղէմ, և զնս ի խանձարբոցն թագաւոր կոչեն, զոր և յուաւ Հերովդէս և խոռվեցաւ և ամ. Երուսաղէմ ընդ նմա:

Եւ ասեն ցմոզն, զի՞նչ ասէք, ով արք օտարք, թագաւոր ո՞ լուաւ այդպիսի, զի ի խանձարուրս այդպէս հոչակեսցի, մինչև յերուսաղէմ յարեւելս հոչակեսցի անուն նորա, և թագաւորք զան նմա յերկրպագութիւն: Մեք աստ թագաւոր այլ ոչ ճանաչեմք՝ բաց ի Հերովդէս արքայէ, միթէ սմա՞ եկիք երկիր պատանել: Ասեն մող[ք]ն. մեզ ծընեալ թագաւորի նշան եղիւ, և ոչ ի տիս հասակի Ասեն նոքա. Երթայք մոլորիք, և թագաւոր այլ ոչ գտանէք բաց ի Հերովդէս յայսմանէ: Ասեն մողքն, եթէ այսքան երկայնագոյն ճանապարհաւ ոչ մոլորեցաք խնդրելով զՀրէատան, այնպէս և նովաւ քաջայոյս ևմք գտանել ի Հրէատան զծընեալ արքայն. զի թէ ծնեալ արքայն յերկնաւորաց ոչ էր հըռչակեալ, սակայն գօրութիւն երկնային սպասաւորութեամբ յաղակս նմա յերկրպագութիւն մեզ ոչ էր առաջնորդեալ: Ասեն Հրէայքն՝ զի՞նչ իցէ գօրութիւն երկնաւորին, կամ զիա՞րդ լինի ծնունդ երկնային, առաջնորդութեան գօրութիւն երկնային, այս թագաւորք՝ հպարտք և օտարութիւն աստահակք ոչ էին եկեալ նմա յերկրպագութիւն:

Ասեն երբայցիքն . զի՞նչ իցէ զօրութիւն Աստուծոյ : Ասեն նոքա . Աստղն զի՞նչ է զոր ասէք : Աստղն արարչութիւն է , և ոչ զօրութիւն : Ասեն մողքըն . դուք էք մոլորեալք , քանդի զիտեմք ըստ սովորութեան աստեղաց և զծրնենդենէ երկրաւորաց , օրէնք աստեղաց ոչ փոխին մինչ ցկատարած աշխարհի , որ զնացունք իցեն՝ ամեննեին յընթանալոյ ոչ խափանին . յարեւելից յարեմուտս կատարեն զրնթաց իւրեանց . և որ չեն զնայունք՝ ուր հասաւտեցան անդ անշարժ կան և ման յաւիտեան , ոչ այլ յարձրանան և ոչ այլ խոնարհագոյնս երեխն : Իսկ զօրութիւն աստեղս այս , յորժամ դադարէաք՝ անդ դադարէք , և ի կանինին մեր՝ առաջի մեր ընթանայր , ի պէտ առաջնորդութեան , և թողեալ զբարձրութիւն երկնից՝ կարի խոնարհագոյն օղագնաց առաջի մեր ընթանայր . և ոչ եթէ յարեւելից յարեմուտս կատարէք , ըստ օրինակի աստեղաց ըզգնացս իւր , այլ ի հիւսիսոյ ի հարաւ , և ոչ եթէ ի առէք ըստ սովորութեան ծածկէք ի ճառագայթից արեգական , և ի գիշերի միայն ծագէք , այլ ի գիշերին ծածկէք ի մէնջ և ի մէջ արեգականն , որպէս զօրութիւնն արարողին արեգական առաւել ճառագայթիւ առաջնորդէք : Եթէ ոչ էք ծնունդն երկնաւոր , սակայն զօրութիւնս այս , յօրինակ աստեղ , այդպիսի օտար օրինակօք մեղ ոչ սպասաւորէք , և ի խանձարբոց մանկան , թագաւորք օտարք՝ մեծամեծք և անհաւատք . ընծայիգ նմա յերկրագագութիւն : Զայս ամենայն օրինակս բերէք Հարցանել մողոցն , ասելն ուր է որ ծնաւ արքայն Հրէից , զի տեսաք զաստղն նորա յարեւելս և եկաք երկիր պատանել նմա : Զայս ամենայն խոռին ցնոսա և զայս լոէին ի նոցանէ , զոր և լոււաւ Հերոդէս և խոռիցաւ , և ամենայն Երուսաղէմ ընդ նմա :

Զի՞ խոռովիս Հերոդէս և անմատարար տրտմիս , թագաւորութեան ? լրւար ծնեալ մանկանն՝ ստոյգ է , այլ ոչ զի նստցի յաթոռ թագաւորութեան քում , այլ զի աղքատարաք դալստեամք աւերեսցէ զօրութիւնս դժոխոց : Իսկ եթէ վասն երկրագագութեան թագաւորացդ թախծեալ տրտմեսցիս՝ զուցէ Հրէստան այնպէս նմա երկիր պատանեն , մի տրտմեսցիս , այլ ուրախացիք , զի եթէ թագաւորք օտարք և հեռաւորք ճանաչիցեն զնա թագաւոր թագաւորաց , և եկեալ նմա յերկրագագութիւն խոնարհութեամք , զի վայելեսցեն զթագաւորութիւնն իւրեանց , խոնարհեաց և դու ընտանեցոյն և զնա նըմա յերկրագութիւն և վայելեսջիք հրամանաւ նորա , որպէս և օտարք զքո թագաւորութիւնդ ի կեանս յոյս : Եթէ երկնաւոր կարծիցես , ոչ կարևս հակառակել և յեսո հարկանել . դարձեալ սրարտ է քեզ խոնարհութեամք երկիր պատանել և վայելել զկեանս յայսմ աշխարհի թագաւորութեամք քով , և զհանդերձեալ զկեանս արքայութեան նորա : Ապա թէ պարզաբար երկրաւոր համարիս միայն , ընդէ՞ր ըընաւ երկնչիս , որ ասացեք՝ եթէ ոչ երբեք լուեալ է ի խանձարբոց թագաւորք , և մինչեւ նա ի տիս զայցէ թագաւորութեան՝ մի՞թէ առանց մահու ակն ունիքս մնալ և զայսապայ լինելոցն առաջի աշաց ունելով տրտմեսցիս :

Այս՝ , ասէ , վասն այդորիկ տրտմիմ երիս պատճառանօք , [դ]ի լուեալ եմ ասելով դիրն՝ ի Բեթղաւէն ելցէ իշխան , որ հովուեսցէ զժողովուրդ իւր : Եւ երկրորդ զի դիրն այն կատարեցաւ և թագաւորքն այս մեծաղոյնք ելին նրանա յերկրագագութիւն : Երրորդ՝ զի աստեղըն առաջնորդ[դ]ութեամքն եկեալք յերկրագագութիւն , ոչ թէ միայն ասացին՝ ո՞ւր ծնաւ արքայն , այլ թէ ուր ծնաւ արքայն Հրէից : Եւ ոչ զարձեալ թագաւոր թագաւորաց , այլ Հրէից միայն , զի ժողովուրդս թողեալ զիս երթան նմա երկիր պատանեն :

Աւադ չարագոյն ամմառութեանն , մի՞թէ լուար մարզարէի նախազուշակեալ , կամ վասն Սաւուղայ , կամ վասն Դաւթի և Սողոմոնի , կամ վասն այլ թագաւորաց , որ թագաւորեցին : Ոչ , ասէ , ոչ մարզարէք մարզարէացան , և ոչ այդպիսի օրինակօք աստղ գուշակեալ թագաւորաց օտարաց բերեալ զնոսա յեր-

կրտագութիւն։ Խոկ թէ այդպէս իցէ, և վասն մանկանն այնոր մարդարէացան, և աստղն վասն նորա գուշակեաց, և այնպիսի օտարաց՝ զալ նմա յերկրսպագութիւն, ապա աստղածային իցէ և երկնային։ Մի՞թէ հնար ինչ իցէ հակառակել Հրամանացն Աստուծոյ։ Ոչ, առէ, խոկ եթէ աստղածային իցէ, ապա Քրիստոսն է որ զալոց էր։

Արդ հարցեալ քննեցից, եթէ Քրիստոս ուստի՞ զայցէ։ Եւ կոչեցեալ ըզքահանային, և զգպիտք ժողովրդեանն, հարցանէր։ և նոքան ասեն՝ ի Բնիթդահեմէ։ Երկիր Յուղայ, ոչ կրտսեր իշխանն Յուղայ։ ի քէն ելցէ իշխան, որ հովուեսէ զգուղովուրդ իւր զիսրայէլ։ Արդ սուուզեցեր զճմարիսն, ով Հերովդէս, մի՛ կարծեր թաղաւոր Հրէաստանի միայն, այլ իբրև ի թաղաւորէ երկնաւորէ։ ի բաց վճարեալ զգաւաճանութեան խորհուրդդ, և անհաւանութեամբ մաքանելով ստուգէ զվրիփումն թաղաւորութեան քո։

Ստուգէ այժմ զի զրեան կատարեցաւ, և կատարեալ զնազանդեին և զհաւանելն ուղիղ։ Բայց թերեւս լեզուն խօսէր խոնարհարար, և սրտիւն նիմիթէր զնենութիւն, խօսէր յաղագս նշմարտութեան զուուն իբրև զուղիղ, և զարդարութեան պատրանքն իբրև զարդարութիւն, ասէր ցնուա՞ զարդարար, Երթայք քննեցէք վասն մանկանն և յորժամ գտան(ան) իցէք առզ արարէք ինձ, զի և ևս եկեալ երկիր պազից նմա։ Ո՞վ չար դաւաճանութեամնդ օրինակ հաւատացելոյդ, ծածկեալ ունի զկատարեալ անօրէնութիւն զաւաճանութիւնդ և պատիր երկրսպագութեանդ, որ սուր քո զաղեղեալ? պատրուտեկն զիերսպարան սուութեան սպասաւորութիւն, ըստ սովորութեան առաջին հրապուրողին, որոյ աշակերտեցար պատրանօք, խօսիս ի ծածուկ սրտի քոյ վասն նորա, որ քննէ ըզսիրու և զերիկամունս, բարբարիս իբրև ուղիղ զուուն որ զյայտնին անսես առնէ, և զծածուկ քննէ։ Դու խօսիս ոչ ուղիղ, որ խօսիս զնանութիւնդ որպէս և կամիս, խոկ մանուկն որ զուղիղն նշմարտէ, և զկամակորն կործանէ։ Եթէ ուղիղ խօսեցար, կատարեն ուղղեալքն ուղիղ առաջորդութեամբ և զարձցին առքեզ, ապա թէ ոչ ծածուկքն քոյ յայտնեցան առ պատեան ի խանձարուրս, և առ քեզ զարձցին պատրանք զաւաճանութեան քո, և ուղիղքն ուղղեցեն ուղիղ ճանապարհաւ։ Խոկ նոքան լսելով զայս՝ Երթան ի Բնիթզահէմ, ահա աստղն զոր տեսին առաջնորդէք նոցա մինչեւ եկեալ եկաց ի վերայ տանն ուր էր մանուկն, և տեսին զաստղն և ուրախացան ուրախութիւն մեծ յոյժ։

Ո՞վ թաղաւորացն օտարաց ուղղութեան, ո՞վ թաղաւորի ընտանեպունի կամակորութեան, տեսեր ընտանեպունին զառաջնորդութեան պատճառն, որ զուշակէր զծեսունէ իւրոցն զալ յիւրսն, և տրամեցան, տեսին օտարութիւն զառաջնորդն, որ ցուցանէր գհաւաքոզն ցրուելոց յօտարութիւնէ յրնտանութիւն, և ուրախացան խոնութիւն մեծ յոյժ։

Արդ ամենայն յաղակս աղքատի այսր, որ յայրն ծնեալ և ի խանձարուր պատեալ, և ի մսուր յանբանից եղեալ ասացաւ և կատարեցաւ։ Արդ տեսոցուք եթէ պերձացեալ փարթամք և աշխարհայուր թաղաւորք զինչ մատուցաննն աղքատիս այս, կամ որպիս[ի] պատուվ պատուեցեն։ Աւտարք, պերճք և ձոխ թաղաւորքն ոսկիսակառք, զտղայն ի խոնարհագոյն բաղմեալ մորթ։ Եկին, առէ, անզ ուր էր մանուկն, և մտին ի տունն, տեսին դժանուկն, հանդերձ Մարիամաւ մարքն իւրով, և անկեալ երկիր պագանէին նմա։

Մեծ էր աղքատութիւն մանկանս այս, երկինք նմա աստեղին սպասուրէր, հարաւ ընդունէր, արևելք՝ զթաղաւորսն յերկրսպագութիւն պատրաստէր, հրեշտակէր ձայնիւ միայն փառարանէին, մողքն՝ զընծայսն մատուցացանէին, և բացեալ զգանձս իւրեանց մատուցին նմա պատարազս, ոսկի, կնդրուկ, և զմուռ։

Ասացէք, ով մողք երանելիք, թէ (ուր՝ և) ո՞ւր ծնաւ արքայն հրէից, և եկայք տեսէք և երկիր պազէք նմա իրբե թագաւորի, մատուցիք նմա պատարագ ոսկի, որպէս վայելէք թաղաւորի, և զկնդրուկն, և զզմուռն, յի՞նչ պէտ մատուցիք՝ պատմեցէք: Լոււրուք, ուր նախ սկիզբն երկրպատկութեան թագաւորին այս ծագեցաւ, և պատիւ երկրպատկութեան և զուշակումն ծագմանն արեգականն արգարութեան: Անտի և յաղագս խոնարհութեան նորա՝ զոր մարդասիրապէս կրելոց է, պարտ էր օրինուկացն՝ ըստ իւրաքանչիւրոց զուշակել, երիս մասն մատուցեալ պատարագաց երեքսրբեան օրհնարանութիւն քերորէիցն և սերորէիցն օրինարէկը իրբե մանկան երկնաւորի, իսկ յաղագս մարմնական խոնարհութեանն, որպէս որդի Դաւթի կոռչեցաւ, առնու զթագաւորութիւն նորա և թագաւորեալ ի վերայ տանն Յակոբայ, մատուցէք նմա ոսկի: Իսկ ըդխունզն՝ վասնզի կոչի յաղպէ Ահարոնի, որպէս քահանայ յաւիտեան՝ ըստ կարգին Մելքիսեդէկի, և իրբե Աստուծոյ:

Իսկ ըստ տասից երգարանի հօր անուանելոյ մանկանդ տաելով դժու, և դէ ևս որպէս մարդ առանց օգնականի, և ի մեռեալ ազատ, եղին զիս ի զիի ներքնում, ամկս այսորիմկ մատուցէք նմա զմուռոս, քանզի մեռանելոց էր, որ և մահուամբ իւրով կենդանացուցանէ զմահացեալոն յաւիտեան: Ասացից իսկ պարզաբար զոսկին, իրբե թագաւորի, զմուռն, որպէսզի մեռանելոց էր, և ըդխունզն, իրբե Աստուծոյ: Իսկ եթէ չարացայք ընդ զալուստ մեր այսօր, զի ազդ օտարութի, խառնիճաղանձ, և կռապաշտք, թշնամիք զինեալք թագաւորի այսմ, և ոչ հնագանդք արժանի հաւատալոյ համարեսուք զդրկայութիւնս օտարացելոցս ընտանիքոց և թշնամեացն բարեգործեալք և կռապաշտքոց աստուապաշտքոց, հաւատացէք ի մանուկի յայդ, ըստ ընծայից մերոց պատարագաց, երկիր պազէք իրբե թագաւորի, և փոխանակ ոսկեռյն; մատուցէք պատիւ, և փոխանակ մատուցանելոյ կնդրիկի, զհաւատու խոստովանեցարուք զոտ Աստուծած, եղերուք մատուցանող զմուի, ըստ հաւատացն Եթիզիմոսի, և մի ըստ զործոցն Կայիշափայ և Անայի. Եղերուք հաւատացեալք զըոյն, զի պարտ է կատարել զբոյն, և մի թերահաւատութեամբ զկատարումն խորհիք իմանալ և Երկմտութեամբ զայթազդեալք և զայլս զայթազդեցուցանել, որոց և Տէրն վայսէ, որ զայթական զեցուցանէ զմի ի փոքըրկանցս յայցանէ:

Այլ նախանձաւոր յերուք մօտաւորք հեռաւորացս, և հաւատացէք ի մանուկս յայս՝ իրբե յԱստուծ, և զարմացէք ընդ աստուածավայելչապէս ծրնունդ սորա: Ի խանձարոց ևտ մեզ զօրութեամբ իւրով զդիտութիւնս առաջնորդէլ մեզ, և մատուցանել նմա պատարագ, ըստ կարգաց, անօրէնութեամբ իւրով: Դուք վատթարագոյն համարելով զդա, վասն խօսելոյ առն հիւսան, և մօր զորա կուսի, որդի հիւսան ամէք, զոր և ճշմարտապէս օրինակէք և ստութեամբ կորնչէք: Ասէք որդի հիւսան և ոչ հաւատայք, և զի որդի հիւսան այնպէս ճարտարապետի, որ առանց արհեստի ճգեալ առանց սեանց զկամարս երկնիս, և ի վերայ ջուրց առանց հիման հաստատեալ զերկիր:

Աստ ծնաւ զդա մայր զորա կոյս, ի հարաւ, և առ մեզ յարելելս, աղրիւր անուանեցաւ, ուստի բղխեալ առանց հիւթոյ ջուր կենդանութեան, ունելով զմուկն բանաւոր, որ զենանի զենմամբ կենդանի, և ի մարմնոյ նորա տիեզերք ամենայն կերակրին, և ոսկը նորա մի բեկցի, և իմաստոնցուցանէ զձրկնորոս յիմարս, խնուլ զբերանս իմաստնոց ճարտասանից, և հեռաւորացս և օտարացս այդպէս նշանակ եղեւ, և իսկոյն հաւատացաք զհեռաւորութիւն մանապարհին մերձ առ զրուն համարելով:

Դուռք, որ մերձ առ սեամս կայիք, ուստի ձայն աւելուեաց հնչեալ տիկեղեաց, և զարթոյց զննչեցեալըն անհաւատութեամբ, ընդէ՞ր ոչ լուայք՝ և եկիք յերկրպագութիւն, որ առ զրունս մերձ եկեալ եմք, և լուայք զայն հովուացքն, զոր լուան ի զօրաց երկնաւորաց, որ բարբառեալ՝ և անել. փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Աստ բարբառեցաւ երդդ այդ Երկնային, և առ մեզ սկիզբն առեալ յսել ձայնի այդք անօբէնութեան, խաղաղութիւն և հաճութիւն, և փառս մասուցաք Աստուծոյ ի բարձունս, ուստի գերազանց խոնարհութիւնդ այդ ծագեցաւ, որ է բարձրութիւն խոնարհաց երկրաւորաց վերանայոյ յերկինս, ուստի բարձրեալն խոնարհեցաւ առ պատերազմող թշնամիքն և ած խաղաղութիւն ընդ ձայնին, խաղաղութեան պարզես առ մեզ կատարեցաւ, և ի մարդիկ հաճութիւն, և հանգարտք, և թշնամիքս՝ զօրականք պատերազմողին զիսաղաղութեան հաւատողեցեալք, և զաք խաղաղաբարաք և որդիք խաղաղութեան, զոր նախ հաճեցաւ ընդ մեկ լինել՝ նախազահս թշնամւոյն, նախակոչեալք յերկրպագութիւն խաղաղութեան։ Երկիր պարզ մանկանս այս նախակոչեցեալքս, և տեսանհմք զառաջին աստուածապաշտք կոչեցեալք լինել ժառանդրութք մերում նախազահութեան, և պատույց առաջին հաւատացելոց հասցուք յետին հաւատացեալքս, փախիցուք յառաջին հաւատացելոց, և պատուեսցուք իրրե զառաջին հաւատացեալքն, և դուռք յետին ուրացողքը՝ հասանելք պատժոյ յետին ուրացողաց։

Աւատի ծագելոց է հաւատաս մեծագոյն զնալ զինի հետոց ուրացողաց յառաջադոյից, և ճշմարիտ հաւատացելոց, որ հաւատացին տեսանել զմանուկը զայս հինաւուքց, նորածնեալ շաւիզս նոր, և զհնացեալ բնութիւնն նորագործեալ ծննդեամբ, և արարեալ ստինքն կուսական և մայրական, և մայրն պատուօղ կուսութեանն պատուեցաւ, և մայրական պատուով ճշմարիտ կոյս փառաւորեցաւ, ի սրբութիւն կուսութեան մնացեալ, և զօրհնութիւն որդէծընութեանն ժառանգեալ. և որ ի հասարակաց բնութիւնէ՝ ի բաց փոխեալ, զի կոյսն առանց առն ծընանի, և կուսութիւնն ոչ ապականի, մի բնութիւն կուսի իբրև կուսութեամբ պարծի, որովայնն զծնունդն պատմէ, և բնութիւնն զկուսութիւնն վերաբերէ. ճշմարիտ մզայ ծնեալ և դրանք ծնրնդեանն փակեալ:

Հրատակ. Ա. Յ. Մըծենիկ

(Twp. 7)